«ՏԵԼԵԿՈՄ ԱՐՄԵՆԻԱ» ԲԲԸ

ԲԱԺՆԵՏԵՐԵՐԻ ՀԵՐԹԱԿԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԺՈՂՈՎ

ԳՈՒՄԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

ԾԱՆՈՒՑՈՒՄ

Հարգելի Բաժնետեր,

«ՏԵԼԵԿՈՄ ԱՐՄԵՆԻԱ» ԲԲԸ (գտվելու վայրը՝ Հայաստան, 0014 Երևան, Ազատության պողոտա, 24/1, այսուհետ՝ Ընկերություն) տնօրենների խորհուրդը «29» ապրիլ 2024թ. կայացած նիստում ընդունել է հեռակա կարգով քվեարկությամբ Ընկերության բաժնետերերի տարեկան (հերթական) ընդհանուր ժողով (այսուհետ՝ Ժողով) գումարելու մասին որոշում.

- Ժողովը գումարվում է 2024 թվականի հունիսի 26-ին
- Ժողովը անցկացվելու է հեռակա կարգով:
- Ժողովին մասնակցելու իրավունք ունեցող բաժնետերերի ցուցակը կազմվել է 29 ապրիլ 2024 թվականին՝ Ընկերության բաժնետերերի ռեեստրից տրված քաղվածքի հիման վրա:
- Ժողովի օրակարգն է՝
    1. Ընկերության հաշվիչ հանձնաժողով ձևավորելու հարցը,
    2. Ընկերության 2023 թվականի տարեկան հաշվետվությունը և ֆինանսական հաշվետվությունը հաստատելու հարցը,
    3. Ընկերությունում շահույթի բաշխում իրականացնելու հարցը,
    4. Ընկերության կանոնադրության փոփոխությունները և լրացումները հաստատելու հարցը
    5. Ընկերության նոր վերստուգող ընտրելու հարցը,
- Բաժնետերերին տրամադրվող տեղեկությունների և նյութերի ցանկը (այսուհետ՝ Ցանկ) հետևյալն է՝
    1. Ժողովի գումարման մասին ծանուցումը,
    2. Տեղեկատվություն Ժողովի օրակարգում ընդգրկված հարցերի վերաբերյալ:
    3. Տեղեկություններ Ընկերության վերստուգողի թեկնածուի վերաբերյալ,
    4. Քվեաթերթիկ օրակարգի հարցերի վերաբերյալ,
    5. Ժողովի հաստատմանը ներկայացվող փաստաթղթերի նախագծերը,
    6. Ընկերության տարեկան ֆինանսատնտեսական գործունեության արդյունքների վերաբերյալ Ընկերության վերստուգողի և Ընկերության աուդիտն իրականացնող անձի եզրակացությունը,
- Ցանկի 5-րդ և 6-րդ կետով սահմանված փաստաթղթերը/փաստաթղթերի նախագծերը ներկայացված են «https://www.telecomarmenia.am» հասցեով Ընկերության ինտերնետային կայքի «Ընկերության մասին» բաժնի, «Բաժնետերերին» ենթաբաժնում:

Բաժնետերերը հարցերի դեպքում կարող են դիմել Ընկերության գլխավոր տնօրենի աշխատակազմ՝ հետևյալ հեռախոսահամարով՝ +37410401002:

«ՏԵԼԵԿՈՄ ԱՐՄԵՆԻԱ» ԲԲԸ

«ՏԵԼԵԿՈՄ ԱՐՄԵՆԻԱ» «TELECOM ARMENIA» 02500052 003